

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԴԻՏՈՒԹՅՈՐՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵԼԵԿԱԳԻՐ

Ա. Մ. Արշալույս

ՌԱՖԱՅԷԼ ՊԱՏԿԱՆՅԱՆԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Եր. Սալաթյանցի մահվանից հետո Լադարյան ճեմարանին է հանձնվել հայագետ պրոֆեսորի արխիվն ու նրա անձնական գրադարանը: Սակայն Գր. Սալաթյանցի արխիվի ու գրադարանի մի մասը փախել էր նրա ժառանգների մոտ: Վերջերս մեզ հաջողվեց այդ ամենը ձեռք բերել: Սալաթյանցի արխիվում պահպանվել են նաև Ռ. Պատկանյանի մի քանի նամակներ ու ձեռագրեր:

Եր. Սալաթյանցի սեպտեմբերի 1-ին կապուցում հայտնաբերվեցին Ռ. Պատկանյանի երկու նամակ՝ հասցեագրված իր հորը դեռ 1866 թ., երկու նամակ՝ ռեդակցիային Պատկանյանին ուղղված, մի անավարտ ձեռագիր՝ արարական պատմության փոփոխության թարգմանություն:

Ստորև մենք տպագրում ենք Ռ. Պատկանյանի նորահայտ նամակներից միայն մի քանիսը:

Մեծապատիվ պարոն

Գրիգոր Արքամովիչ.

Ձեռ նամակը ամսույս 3-ին գրած, ստացա: Շնորհակալ եմ:

Գրում եմ, թե Նիկիտա Օսիպիչը հոժար չէ, որ նորա մասին գրած հիշողություններս նորա կենդանության ժամանակ տպվեն: Ես ինչ որ գրել եմ մեր անմահ հիշատակի արժանի պրոֆեսորի մասին՝ բոլորը գուցե ճշմարտություն է. ոչ նորա պատկանելի անվան և ոչ ինձ կվախելի շողոքորթություն. վերջապես, ես ինքս ամբողջ կյանքիս մեջ ոչ ոքի շողոքորթություն արած չեմ, և այսուհետև ես անելու չեմ: Ուրեմն, ավելորդ է պարոն պրոֆեսորի կողմանից համեստությունը, իսկ մեզ, նորա նախնին աշակերտացս համար, եթե լսեինք՝ ապերախություն պիտի լիներ հայ ազգի առջև: Ուրեմն, աղաչում եմ քեզ, անպատճառ տպեալ Գրիգոր ևս ուղղել, եթե սխալներ կան, լցնել, եթե պակաս բաներ կան: Ես այս իրեր ավելորդաբանություն կամ իրեր շողոքորթություն իրավունք չունենաս և ոչ մի հովտ մեջից հանելու: Հեռավոր մեր անմահ էմինին ոչ թե այդպիսի տևար հիշողություններ կվախեն նորա հիշատակին, այլ ամբողջ և րազմահատոր կենսագրություններ և քննություններ: Շատ կցավիմ, եթե նորա հորեկյանի գրքեն դուրս հանես թե իմ հիշողությունները և թե այն ոտանավորը:

Մեղք, որ նա ինքը ինձ գրած չէր, ես սաստիկ կհարձակվի նորա այդ գիպվածում անտեղի համեստության համար:

Ինչու չես ուղղում կարգալ թարգմագրերը պարոն էմինին: Կարծում ես, որ նա չի՞ հասկանալ: Ես քեզ խնդրել էի, որ ինքդ կարդաս թե՛ Ինտրդին, թե՛ տիկին Վարվառային, թե՛ օրիորդ Մարիամին. այդ ավելի լավ կլիներ:

վասն զի դու երեկելի զեկլամացիա ունիս, ինչպես որ ևս համոզվեցա
այն օր ճաշի վրա:

Խնդրեմ չծուլանաս իմ խոնարհ ողջույնը հանձնես իման Ստե-
պանովիչին, տիկին Վարվառային, օր. օր. Մարիամին և Նունեին, պ-րն Սե-
րբրյակովին, պ-րն, պ-րն Ներսիսյանին, Ղամբարյանին, Մամիկոնյանին,
Սուրենյաններին, Սարյաններին, ևն, ևն:

Եթե մի լավ բան լսես ընծայի մասին, իսկույն զեկուցում տուր:

Պատրաստական ծառա՝ Պատկանյան

$18\frac{6}{4}$ 78.

Նոր-Նախիջևան

Այս նամակում Ռ. Պատկանյանը խոսում է Մկրտիչ էմինի գրական-
մանկավարժական գործունեության մասին:

Նիկիտա Օսիպովիչը՝ Մկրտիչ էմինն է:

Գեորգը՝ Գեորգ Քանանյանն է, տիկին Վարվառան նրա կինը, որի
ծախսերով 1893 թ. տպագրվեց Ռ. Պատկանյանի «Ընտիր երկասիրություն-
ները»:

Ղամբարյանը հայտնի պրոֆեսոր Գամբարովն է, որը Իրանատ հանրագի-
տական բառարանի գլխավոր խմբագիրն էր հետագայում:

Սուրենյանները Հակոբ ավագ քահանա Սուրենյանն է և նրա որդի
հայտնի նկարիչ Վարդգես Սուրենյանը:

Սիրելի՛ բարեկամ պ-րն Գրիգոր Խալաթյանց.

Առանց ձանձրալի առաջաբանության շտապում եմ հայտնել քեզ իմ
միտքս և խնդիրքս, որի կատարումն անկեղծ շնորհակալությամբ կլցնե
սիրտս:

Այլուտեղ, Մոսկվայում, կա մի նախիջևանցի երիտասարդ, ազգանունը
Մորոզով (կամ Մարաղով), որ սովորում է կոնսերվատորիայում: Ասում են,
քանքարավոր երաժիշտ է և ժամանակով հռչակավոր կոմպոզիտոր կարող է
լինել:

Խոնարհարար խնդրում եմ քեզ, այս ներփակյալ ոտանավորս ցույց տուր
նորան. բացատրե միտքը և խնդրե, որ ճասիական ոճով, ասիական մեղեդիով
և սրտառուչ ասիական կլկլանքներով մի ռազմական մարշ հորինե, ուր դուրս
թափվի ընկճյալ ազգի արտասուքը, տառապանքը, նորա կանանց հեկեկանքն
ու կոծը, ժանգոտած շղթայի շղկշղկոցը, դենքի շառաչունը, վրիժու ձայնի
սոսկալի աղաղակը և սորա արձագանքը հայրենյաց լեռների մեջ և, վերջա-
պես, ազգի ազատության և խաչի հաղթանակի փառաբանությունը:

Այս բանը ահա ներշնչե երիտասարդ երաժշտին, շարժելով նորա մեջ
և ազգասիրություն, և փառասիրություն, և անմահ հռչակ:

Դժբա համար, իհարկե, նորան պիտի մոտենաս (երիտասարդ ուսանողը
միշտ չուր համար պատիվ կհամարե համազգի գիտնական պրոֆեսորի հետ
ազնիվ հարաբերություն ունենալը), տունդ հրավիրես, հետը քաղցրությամբ
վարվես, и дело в шляпе.

Իսկ թե ինչու այս առաջարկությունն քեզ, և ոչ մեկ ուրիշին եմ անում, ահա պատճառը: Ես դիտեմ, որ դու իմաստասիրել ևս եվրոպական երաժշտություն և, միևնույն ժամանակ, ասիականին ևս անտեղյակ չես. զեթ վերջնույս ոճը և ճաշակը գործնականաբար քեզ հայտնի է, այնպես որ՝ քու միջամտությունը և խորհուրդը այս բանի մեջ գրեթե անփոխարինելի է: Հուսամ, խնդիրս չես մերժի:

Այս ոտանավորս, որն, ասում են, երկերիս մեջ ամենահաջողակն է, կարող է այսօր վաղը բյուրավոր ոգևորված երիտասարդների բերանը ընկնել* և արլան գոլորշիքի և վառողի թանձր ծուխի միջով անցնել փոքր Ասիան մի ծալրից մինչև մյուսը: Թող ուրեմն դա լինի արձագանք ամեն ազնիվ սրտերու, որոնք թունդ պիտի տան, լսելով հայրենյաց ազատության պայքարի համբավը:

Ո՛ղջ լիր: Յանկանալով ամեն տեսակ ազնիվ ձեռնարկիդ մեջ կատարյալ հաջողություն, մնամ քեզ միշտ զնահատող

խոնարհ՝ Ռ. Պատկանյան

30
1891 1

Նոր-Նախիջևան

Նամակում նշած բանաստեղծությունը չի պահպանվել Գրիգոր Խալաթյանցի թղթերում: Սակայն Ռաֆայել Պատկանյանի 1891 թ. մայիսի 25-ին գրած նամակում նշվում է «Զինվոր» բանաստեղծությունը, որի տեքստը առաջին անգամ ուղարկել է բանաստեղծը իր գրքի խմբագրին հինգ ամիս առաջ այդ օրից:

Մեծարգո բարեկամ Գրիգորի Արրամիչ.

Ստացա Ձեր վերջին նամակը ամսույս 19-ին գրած:

Անչափ շնորհակալ եմ Ձեր անշահասեր աշխատանքի համար ի մասին «Զինվորին», և խոսք չեմ գտնում երախտագիտությունս արտահայտելու: Ես վստահ էի (և այժմ ևս նույն վստահության մեջ եմ), որ իմ խնդիրը միայն Դուք կարող էիք հասկանալ և զուլս բերել: Այնուամենայնիվ, ցավելով պիտի հայտնեմ Ձեռ, որ Դուք պետք ևզածի չափ, հասկացած չեք ինձ: Ես ամենևիլ չէի ցանկանում ի լույս ընծայել երկիս ոչ խոսքերը և ոչ եղանակը. ևս միայն կամենում էի նորա հարմարավոր մեղեդին հորինած տեսնել. իհարկե, ձեռագրում: Մի կողմ թող մնա իմ ցանկությունը. մի՞թե դժվար էր նախատեսել, որ այն պարագայից մեջ, ուր գտնվում ենք, ոչինչ կերպով թույլ չէր տրվիլ նորա հրատարակելը: Այն չեմ ասում, որ առայժմ հրատարակելու ևս ոչինչ հաշիվ չկար. ամենագեղեցիկ բաները (մի՞թե այդ Դուք նկատած չեք) միշտ լուկլայն և թաքուն ենք ծավալում ժողովուրդի մեջ և խորունկ արմատներ արձակում: Վերջապես ով պիտի արգելի մի օր այդ կտորը տպված տեսնել արատահամարում:

* Ես արդեն լսել եմ, որ զանազան տեղ զանազան եղանակներով երգում են, որը չափազանց անդամ պարսկի ոճով, որը պոլկաների դարչելի եղանակով, որը այսպես, և որը այնպես, բայց ոչ մինը գուրեհկան և Ներսիս Բովանդակության համապատասխան:

Ի մի բան — իմ բոլոր ցանկութունս այն է, որ շարադրվեր (կամ ստեղծագործվեր) ոտանավորիս կղանակը, և մի օրինակ ձեռագիր իմ ձեռքը հասներ:

Ձգիտեմ ինչպես պատահեցավ, որ այս հասարակ բանը չկարողացա Ձեզ, ինչպես որ պետք է, հասկացնելու: Բայց ժամանակը կորած չէ. եթե կամենաք, Դուք այսօր և հետ կարող եք իմ խնդիրը կատարելու. Ձեր (վերջին) նամակից երևում է, որ բոլոր զգվարությունը քանի մի դրոշի մեջ է, որ պետք է շարտել ներշնչվող երաժշտագետի ուսին... Մի՞թե Մոսկվայի պես քաղաքում մի փոքրիկ մեքենաս ճարելու զգվարանում եք...

Այժմ մի ուրիշ խնդիր Ձեզ: Ես կամենում էի հենց այս ամառ փոքրիկ Աշոտ որդուս գետեղել կազարյան ճամարանը. բայց իմ տարաբախտությունեն Գեորգը բացակա է: Նա ինձ ասաց, որ լուր տեղակալ Ձեզ է նշանակել. նա միայն $\frac{1}{2}$ ժամ մնաց Ռոստովի վոկզալում. ամենևին հնար չգտա այդ մասին խոսք բանալու, ամենքը վրդովված և խառնաշփոթ էին: Այժմ Դուք ինձ խրատեցեք՝ ինչպես անեմ, որ իմ փափաղը գլուխ գտնուի: Եթե անունով պիտի գրեմ խնդիրը՝ Ձեզ թե՛ Գեորգին և ի՞նչ պիտի գրեմ: Եթե չեք ծուլանալ, խնդրեմ, հարացույցը շարադրեցեք և շուտ հասուցեք ինձ զույգ բնդ այլ հրահանգներին:

Ապաստեմ եմ Ձեր պատասխանին: Ողջ եղեք:

Մնամ Ձեզ միշտ սիրող և գնահատող՝ Ռ. Պատկանյան

P. S. Պատահի, եթե կարող լինեմ այս ամառ քանի մի օրով գալ Մոսկվա ֆրանսիական արվեստաշանդեսը տեսնելու, կարող եմ Ձեր բնակարանում ապաստարան գտնել...

1891, 25 մայիսի

Եսր-Նախիջևան

P. M. Бартиян

Относится ли прозвище Парадобнади:
к магистру Василию
в памятной записи монаха Феодула (1059 г.)?

На странице 1586 Коаленовой рукописи № 263 Парижской Национальной Библиотеки находится памятная запись монаха Феодула, изданная впервые В. Н. Бенешевичем и гласящая: *ἑταλειώθη ἡ πανόρετος Κλημάς προστάξει Κωνσταντίνου πρωτοεπαθάρτου καὶ ὑπάτου τοῦ Βασιλέα διὰ χειρὸς ἐμοῦ Θεοδοσίου μοναχοῦ καὶ πρωτοεπισκόπου τῆς ὑπεραγίας Θεοτόκου Σαλῆς, ἀμφότεροι Καππαδόκαι, ἐπὶ τῆς βασιλείας Ἰσαακίου τοῦ Κομνηνῶ καὶ πατριάρχου τῆς βασιλείας Κωνσταντίνου προέδρου καὶ πρωτοεπισκόπου καὶ Θεοδοσίου Ἀντιοχείας: ἔτει δ' αὖτ' ἑταλειώθη: τὸ μῆνος ἀπριλλίου δ', ὡρα ζ', τῷ ἁγίῳ καὶ μεγάλῳ σαββάτῳ, καταπάνω Ἑδέας: Ἰωάννου τοῦ Δουκίτζη, δούκων Ἀδριανῶ Ἀντιοχείας, Ἀαρὼν προέδρου καὶ αὐτοῦ δὲ τῆς Ἀνγούστης Μεσοποταμίας, Βασιλείου μαγίστρου τοῦ Παραδοβναδι.*